

տոյ՝ ութ գլխում ուսումնասիրում է կեսարականութեան առանձնապատկույթիւնները, ինչո՞ւ կեսարականութեան հոռոմայեցի նախակարապետները՝ կեսարը և լետագայ կեսարները, Հելլենացոյ գինւորական բռնակալները, գինւորական բռնակալութեան փորձերը կարթագենում, կեսարականութիւնը նորագոյն. իտալիայում և վերջապէս՝ կրօնական և Նապօլէօն. Մանրամասնութիւնների մէջ, մանաւանդ կեսարականութեան ծնւնդը մասին և ալն եղանակը. որով սա իրան պահպանում է, հեղինակը շատ նուրբ է և հիմնւում է լայնածաւալ ուսումնասիրութիւնների վերաբեր. Նա ոչ միայն գծադրում է կեսարականութիւնը ընդհանուր գծերով, այլ մտնում է նաև ըստ երևութիւն մանր բաների մէջ, խօսում է կեսարների ուժի միջոցների մասին ներքինում և արտաքինում: Զարմանալի կը թւալ շատերին, բայց անհերքելի ապացոյցներով հաստատում

է Ռոշերը, որ կեսարականութիւնը իւր հիմունքով թող է պատերազմական կողմից: Հեղինակը նկարագրում է կեսարներին առանձին հիանալի կերպով և շատ բան դորա մէջ նոր է գրականութեան համար: Տեղեր կան, սակայն, որոնք ճիշդ չեն կամ ոչ ուղիղ հասկացւած. բայց դժբա վերաբերում են մի քանի օրինակներին, որոնցով հեղինակը լուսարանում է իւր ասածը. դժբա չեն վնասում գրքին:

Մեր ընթերցողների համար աւելորդ չէր լինիլ ասել, թէ Ռոշերը, որը Յւրոպայի ներկայումս ապրող նշանաւոր և անուանի գիտնականներիցն է, քաղաքատնտեսութեան պրօֆէսոր է Լալպցիգում տասնեակ տարիներից ի վեր և թէ ալլ գիտութեան մէջ նա հիմնադիրներից մէկն է պատմական կոչւած ուղղութեան, որի մի ճիւղի համար նա ալժմ միակ մեծ ներկայացուցիչն է:

Ա.

ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ ՅՈՒՆԱԿԱՆ ԵՒ ՀՌՈՎՄԵՆԱԿԱՆ ԴԻՅԱԲԱՆՈՒԹԵԱՆ (միջօթիայի), մասնակցութեամբ Թ. Բիրտի, Օ. Կրուզուսի և ուրիշների, Հրատարակութիւն Վ. Հ. Ռոշերի (W. H. Roscher, Ausführliches Lexikon der griechischen und römischen Mythologie). բազմաթիւ նկարներով. տետր 1—13, Լալպցիգ, 1887—1888 թ., 2272 սիւնեակ (երեսը 2 սիւնեակ), տպ. Teubner, զինը իւրաքանչիւր տետրի՝ 2 մարկ (մօտ 1 ռուբլի):

Այս ձեռնարկութիւնը իւր կարեորութիւնը և կենսականութիւնը ամեն կասկածանքից վեր ցոյց տուց

Գերմանիայում: Հրատարակութեան առաջին նպատակը երևում է արդէն վերնագրից՝ միջոց տալ հետաքննել

ամեն բացատրութիւն չունական և հոռոմէական դիցարանութեան վերաբերեալ: Բայց, բացի այդ գործնական նպատակից, հրատարակութիւնը կատարում է մի գիտական կոչում, հանդէս բերելով և կամ դրդելով անպիտան ուսումնասիրութիւններ, որոնք առանց դորան թերեւ լուս չը տեսնէին և կամ բարձր հասարակութեան անմատչելի մնալին: Արխէօլոգիական (հնարանական) խնդիրները մեծ հմտութիւնով են լուսարանւած, մինչդեռ դիցարանական խնդիրները միմիայն շօշափւած են, երբի ան պատճառով, որ նոքա միջոցներն մէջ են դեռ ևս: Կան նաև չ'աջողւած լուսածներ, օրինակ, ծառերի պաշտա-

մունքի և լաւէրժահարների վերաբերեալ: Մանդուկիւնները մասին գրւած է, առանց օգտուելու Մանհալտի կլասիկական աշխատութիւնից: Եզիպտարանութեան և Արեւելագիտութեան վերաբերեալ մի քանի լուսածներն մէջ, փոխանակ է. Մալէրից (Meyer) օգուտ քաղելու, լիւսած է Դրեքսեր, Շատ աջողւած է Շոէուզիդի լուսածը «Հեքատի»-ի մասին (Hekate)։—Վերջին 13-երորդ տարի մեծագոյն մասը բռնում է Ֆուրտլինգերի լուսածը Հերակլէսի մասին. ցալժմ այդ վերջին տետրը (H) տաւից չի անցկացել, ասել է թէ բառարանի հետեւալ տետրերը բաղմաթիւ են լինելու:

ԼԵՍՍԵՊՍ, ՖԵՐԴԻՆԱՆԴ, 40 ՏԱՐԻ ՅԵՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ: Հատոր I և II, Բերլին, 1888 թ.

Դարուս այս մեծ մարդը հաւաքել է իւր բոլոր ալ և ալ բովանդակութեան գրւածքները, որոնք որ և է լարաբերութիւն ունին իւր անձնաւորութեան հետ և որոնք իրար հետ կապւում են: Մի ամբողջութիւն կազմում է միայն երկրորդ հատորը, ուր հաւաքւած են վկայութիւններ Սուէզի ջրանցքի պատմութեան նկատմամբ, անթիւ օրւալ արձանագրութիւններ, թղթակցութիւններ և պաշտօնական թղթեր, որոնք այդ համաշխարհային նշանաւոր գործի ընթացքի մի սլարդ և կենդանի պատկերն են տալիս և պարունակում են ասելի հետաքրքրական իրողութիւն-

ներ, քան ալտեղ կարող է վիշտակել: Մանաւանդ սուր կերպով է դուրս բերւած Անգլիայի թշնամութիւնը ջրանցքի շինելու դէմ, թշնամութիւն, որ մարմնացած էր լօրդ Պալմերստոնի մէջ. և լեսսեպսի փոքր գործքերից չէր՝ այդ թշնամութեան դէմ լաղթող հանդիսանալ: Իւր երկար բնակութիւնը Եգիպտոսում նորան առիթ է տալիս երկիրը, որի հետազօտութիւնը նորա համար թեթեւացրած էր բարեկամութիւնով Սալիդ և սորա ժառանգ իղմալի խնդիրների հետ, զանազան կողմերից նկարագրելու Շատ աւելի բաղմաղան է առաջին հատորի բովանդակու-